

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ

Տարեկան . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . 6 "



ԱՐՏԱՍԱՀԱՆ

Ի վառ թիւ մեկ ծրարով
Տարեկան . . 14 Ֆր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոլար
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանոթանալ տուր
20 ւանդիւր



ՋՈՐՋ

Redaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւ
չեմ տրուիր

Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Փ Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Մեր մէջը գոյութիւն ունի մտա-
ծողներու և գործողներու դասա-
կարգ մը՝ որ իբր միակ պայման
հայկական վերջին դժբաղտութեանց
դարձանով մին, անդու անդադար
կը ջատագովէ թուրքիոյ մէջ յե-
ղափոխական յարատեւ, մշտական
գործունէութեան մը անհրաժեշտ
պէտքը։ Այս կարգի մարդիկ պա-
տենայինք երբեք ձեռքէ չեն
հաներ, փաստերը ձեռքերուն մէջ
ցոյց տալու թէ՛ յեղափոխութիւնը
միայն վերջ պիտի կրնայ տալ ազ-
գային դժբաղտութեանց։ Եղա-
փոխութիւնը միայն, ուշ կամ կա-
նուխ, ու է կերպով պիտի հրա-
ւիրէ, պիտի պարտաւորէ Պիւրի-
նի յիշնագիրն ստորագրող պե-
տութիւններն որ հայկական բա-
րենորդմանց ինպատ Պոլսոյ մէջ
իրենց միջամտութիւնն ու ազդե-
ցութիւնը գործադրեն։ Եղափո-
խութիւնը միայն թուրք պետու-
թիւնը պիտի հարկադրէ կայսրու-
թեան սահմաններուն մէջ հայե-
րու ինպատ խօստացուած բարե-
կարգութեանց ծրագիրները գոր-
ծադրելու։

Մինչեւ հոս գոնէ կատարելապէս
հասկնալի են։

Բայց, եթէ փորձութիւնը ու-
նենայինք խնդրելու այդ անձերէն,
որ քիչ մը աւելի մանրամասնու-
թեանց մէջ մտնեն ու հասկնան,
բացատրեն մեզի թէ՛ ինչ պայման-
ներու հետեւանքով յեղափոխու-
թիւնը այս հրաշքները պիտի ի-
րականացնէ։ Եթէ խնդրենք ա-
նոնցմէ որ մեզի ծանօթացնեն այն
գաղափարը, այն սահմանափակ-
եալ իմաստը, զոր յեղափոխութիւնը,
յեղափոխական գործունէութիւնը բա-
ռերը անոնց մտքին մէջ կարծեցնեն,
ա՛հ, այն ատեն խնդիրը պիտի
կնճռուէր։

Այո՛, հայաբնակ նահանգներու
վարչական բարեփոխութեանց մեր
պայքարը՝ որպէս զի արդիւնաւոր
ըլլայ, որպէս զի գործնական ու
տեւական ելքի մը յանգի, իբր
հետեւանք Եւրոպական միջամտու-
թեան մը, անհրաժեշտ է որ հայ

ժողովուրդը, յեղափոխական գոր-
ծունէութեանց շնորհիւ, նախա-
պէս ցոյց տայ կենդանի ազգ մը,
կուռելու ընդունակ ու իրաւունքը
պաշտպանելու վարժ ցեղ մը ըլ-
լալը։ այս տեսակետով բացարձա-
կապէս, յաշիտեմապէս համակար-
ծիք ենք մեր կարգ մը ընդգիւ-
խօս հրապարակագիրներուն, որոնք
յոժարակամ կիրաքնեն յեղափո-
խական գործունէութեան օգտա-
կարութիւնը ըմբռնելու մենաշնոր-
հը։ որոնք իրենց միայն կը վերա-
պահեն հայրենասիրութիւնն ալ,
փորձառութիւնն ալ, տաղանդն ալ,
ուրիշներու բաժին հանելով իմաս-
տակութիւնը, դաւաճանութիւնը և
թրքութիւնը։

Բայց, ճշդիւ, ո՛ր է յեղափո-
խական գործունէութիւնը զոր մեզի
կարենային ցոյց տալ իբր որոշ
գործադրութիւնը որ և է մէկ կու-
սակցութեան մը կամ խմբակի մը
հետապնդած ծրագրին։ ո՛ր է տաս-
նամեայ յրբեկանի արժանի յեղա-
փոխական գործունէութիւնը մը, —
ըսնի որ տակաւին անցիւր տարի
կարգ մը անդամներէ կերպով
ցնդածներ խելագարութիւնը ունե-
ցան տասնամեայ գործունէութիւնը
տօնելու կուսակցութեան մը, որ
իրաւցնէ ազգային դժբաղտու-
թեանց մէջ ամենէն դատապար-
տելի, ամենէն ոճրագործ գերը
խաղացեր էր։

Այդ մարդիկ կը կարծեն արդ-
եօք թէ յեղափոխական գործու-
նէութեան արդիւնք է՝ կեդրոնա-
կան հրամաններու ողորմելի գոր-
ծիք թուրք բարձր պաշտօնատար-
ները սպաննելու դիւրին գործը՝
(զոր Դրօշակեան կուսակցութիւնը
իր ծրագրին մէջ անցուցած է)։

Արդեօք յեղափոխական գործու-
նէութեան արդիւնք կը համարին
Պանգայի ամենախառնաձայն գրա-
ւումը, ու ալ աւելի խայտառակ
անձնատուութիւնը, որուն հետեւ
անքուղ տաւ—ար հաւ—գար Հայեր կու-
տորուեցան, Պոլսոյ մեր ստուար
գաղթականութիւնը մահացու կեր-
պով հարուածուեցաւ, ու որ աւել-
ին է, Եւրոպայի աչքին—որմէ
մեր բաղդը անխուսափելի կերպով
կախուած է—հայ յեղափոխականը

«անիշխանականի» տխուր համբա-
ւը շահեցաւ։

Այլ մի՞ գուցէ յեղափոխական
անձնուէր գործունէութեան մը գե-
րագոյն պատկուծը ըլլայ խանա-
սօրի յիշատակելի արշայանքը,
երբ հայ յեղափոխականներու գունդ
մը եղական քաջութիւնը կունենար
գիշերով թուրքեպարսիկ սահմա-
նագլուխը անցնելու, և կէս ժամ
հեռաւորութեամբ վայր մը, քնա-
ցող քանի մը քուրդ կիներ սպան-
նելու հոյակապ հերոսութիւնը
գործելէ ետք, փոխանակ կռիւ
շարունակելու, վատաբար, անա-
մօթաբար դէպի սահմանագլուխ
կը շտապէր, սարսափելով նորա-
ծագ լոյսէն, որուն միջոցաւ Շա-
րաֆ պէկի զինակիրները կանոնա-
ւոր մարտ մղելու կը պատրաս-
տուէին։

Ասոնք են յեղափոխական գոր-
ծունէութեան արդիւնքը, զոր մե-
զի կը ներկայացնեն, ու ասոնց
շարունակութիւնը պիտի ըլլայ
յեղափոխական մեր ապագայ գոր-
ծունէութիւնը։

Անօգուտ պիտի համարէի անց-
եալին վերաբերեալ այս ցաւալի ի-
րողութեանց վերլուծումը ընթեր-
ցողներուն ներկայացնել, եթէ մեր
յեղափոխական ներկայ կացու-
թիւնը մեր դժբաղդ անցեալին
նմանութիւնն ու շարունակութիւնը
չըլլար։ Եթէ Դրօշակեան կուսակ-
ցութիւնը, զոր օրինակ, չի յա-
մուր տակաւին նոյն այն մեզի
համար մահաբեր անցեալ գործու-
նէութիւնը անընդհատ փառաբա-
նելու, տօնելու և հերոսութիւն,
դիւցազնութիւն համարելու այն-
պիսի արարքներ՝ որոնց «ազգին
դէմ դաւաճանութիւն» անունը ա-
ւելի պիտի պատշաճէր։

Չէ՛, պարոններ չէ՛։

Է՛հ, խմբական մասնակի կռիւնե-
րու, դիշերային անախկալ ընդհա-
րումներու ծրագիրը, զոր գլուխ
պատուելու աստիճան իբր ազգային
դատին, յեղափոխական յաղորդ-
ութեան միակ պայմանը մեզի դեռ
ներկայացնելու կը յանգնիք, հայ
ժողովուրդին համար շատ սուղի
նստաւ, որպէս զի անոնց բարե-
յաջող արդիւնքին տակաւին հա-

ւատացողներ գտնուէին։ Բայց ե-
թէ, զայրանալով մեզի դէմ, մեր
երեսին կը նետէք ողորմելի, ի-
մաստակ, ծախումս բաւերբ։ Ե-
թէ մենք հայրենասիրական չափա-
զանց եռանդի մը հպատակելով ու
միայն մեր դժբաղդ եղբայրներու
սիրոյն, այս ճշմարտութիւնները
անկեղծութեամբ բսկու բաշու-
թիւնը ունենալու համար, մեզի
«դաւաճան» կանուանէք,

Ի՞նչ պիտի ըսէք, ո՛ հայրենա-
սիրութեան երանելի առանձնա-
շնորհեալները, Յարութիւն Չաքը-
եանի մը համար՝ որ Չէլթուրի
նախկին երկու ապստամբու-
թեանց միջոցին իր «ապստամբա-
պետ»ի հանգամանքովը, կարծեմ
գոնէ ձեզի չափ խորձառու հայ-
րենասէր մը ըլլալուն ապացոյցը
տալէ ետք, այս կողմերը կուգար
իր վերջին շունչը փչելու, ձեզի ու
ձեր գործունէութիւնը նշանակե-
լով ու անիծելով։

Ի՞նչ պիտի ըսէք, ո՛ հայ ազգը
գործնապէս յեղափոխողներ, Եթէ
ձեզի յիշեցնենք թէ՛ 1896ին մեր
խնդրով զբաղող, մեզի համակիր
երկու խորհրդարաններու մէջ ձեր
վարմունքը պաշտօնապէս նշաւակ
ուեցաւ՝ թէ կապրիէլ Հանոգոյի
կողմէ (այն միջոցին Յրանսայի
արտաքին գործերու նախարար) և
թէ Լորտ Գրիգորի կողմէ (այն
միջոցին խորհրդական Անգլիոյ
պատաքին գործերու)։ Եթէ յիշե-
ցնենք թէ՛ ձեզի դատապարտեցին
հեղինակաւոր բոլոր հայաստանե-
սկսեալ Ճէյմս Պապսէ, Տընի
Գոչէնէ, Կոմս տը Մունէ (որ Յրան-
սական խորհրդարանին մէջ Հանո-
գոյի թրքասէր քաղաքականու-
թիւնը դատապարտելով հանդերձ՝
կը պահանջէր, յանուն հայկական
շահերու՝ որ «Հայկական խնդիրը»
«Հայ Յեղափոխականներու» արար-
քէն անջատուի), մինչեւ Լինչ ու
Տը Գոնդէնսոն, որ տակաւին անց-
եալ տարի իր «Բրիտանիաներ ու
Միւսիւմներ» հայաստանական հո-
յակապ երկին մէջ ձեզի կը մե-
ղադրէր իբր «աւելի ազմուկ հա-
նող քան գործ տեսող», ու կան-
ուանէր ձեզ քաղաքավարութեամբ
«գրգռութեան այն աստիճանին
հասած, ուր մարդ ալ տրամաբա-

նեղու կարողութենէն կը զրկուի» :
Եթէ մեզի պէս «ողորմելիներ»
ձեր ազգասէր վարմունքէն ձեզի
ետ կեցնելու համար պէտք եղած
հնգինակութիւնն ու փորձառու-
թիւնը չեն ներշնչեր, չնո՞րհ, է՞ր
չանսայիք վերագրեալ տաղանդա-
ւոր հայաստեաներու խորհուրդնե-
րուն ու հասկնալիք թէ՛ ազգային
գաւթին համար արգիւնաւոր միակ
գործունէութիւնն ընդհանուր ա-
պրտաւնդարեան պատրաստուիլն է,
ու այն ալ աւանանախակեալ, յար-
մարագոյն շրջանակի մը մէջ :

Տ. ԷԼՄԱՍԵԱՆ

ՕՐՈՒԱՆ ՔԱՂԱՔԱՎԱՍՈՒԹԻՒՆԸ

Ֆրանսայի արտաքին գործերու
նախարարին նախաձեռնութեամբ,
Յուլիս 15ին Բարիզի մէջ գումար-
ուեցաւ միջազգային համաժողով
մը, մասնակցութեամբը համայն
պետութեանց պաշտօնական ներ-
կայացուցիչներուն, «Կանանց վա-
ճառք»ը (դրեգ տէ պլանշ) սահմա-
նափակելու մասին խորհրդակցելու
և միջազգային համաձայնութեանց
յանգելու համար :

Մարդկային ժամանակակից ըն-
կերութեան ամենէն անգարմանելի,
ամենէն արիւնոտ վերքերէն մէկն
է անտանելի թշուառութեանց հե-
տեւանքով իրենց պատին ու մար-
մինը վաճառելու հարկադրուած
կանանց այս պարագան, որը վեր-
ջին տարիներու մէջ մանաւանդ կը
նկրտի ամենամեծ համաճարակի
մը համեմատութիւնները առնելու
Բովանդակ աշխարհի շուրջը
այս տարաբաղդ էակներուն թիւը
այնքան աճած, սպիքան ստուա-
րացած է, ու անոնց վաճառումը

այնքան շահաբեր նպատակներ կա-
պահովէ որ՝ կանանց արտաճու-
թեանը ու ներածութեանը համար
ահագին դրամագլուխներով առեւ-
տրական ճշմարիտ կազմակերպու-
թիւններ հիմնուած են, որոնք
քաղաքացիական միայն այս գործով
կը պարապին. կանանց վաճառքով
զբաղուող շահագէտներն ունին ի-
րենց մասնաւոր սակարանները,
գրասենեակներն ու ակումբները,
ուր պահանջի, առաջարկի նպաստ-
աւոր կամ աննպաստ պայմաններ
րուն համեմատ, ինքրանքներու ա-
ռաւորութեան կամ նուազութեան
համաձայն, վաճառուող կանանց
ալ գինները, որպէս թէ ոչխարներ
ըլլային, կ'իյնան կամ կ'բարձրա-
նան : Եւրոպայի բոլոր մեծ քա-
ղաքներուն մէջ գոյութիւն ունին
միայն այս տեսակ կանանց փո-
խադրութեամբ զբաղող ը կերու-
թիւններ, կամ անոնց մասնաճիւ-
ղերը, որոնց գործակատարները
անգաղար կը շրջին իրենց իրաւա-
սութեանը ենթակուած որոշ շք-
շանակներու մէջ, զխաւորաբար
այն վայրերը ուրտեղ բնակիչները
յետին չբաւորութեան մէջ կը հե-
ծեն, և ընկերային ստորին գա-
սակարգի պատկանող մեծ քանակ-
ութեամբ աղջիկներ ու կիներ
որ եւ զբաղուած որոշուած վրայ,
անկարող կըլլան գիմագրել իրենց
պատիւը շահագործողներու առա-
ջարկներուն :

Կանանց առուտուրը գլխաւորա-
բար զարգացած է Գերմանիոյ մէջ
(որ Ամերիկեան ինքրանքները կը
գոհացնէ), Ֆրանսայի ու Աւստրիոյ
մէջ. Յունաստան փոքր Ասիոյ
հայկայիներն է : Կանանց վաճառ-
քին տիեզերական կեդրոնն է,
ժընէվի ու Օտեսայի հետ, Վիէն-
նա, ուր ամէն օր հազարաւոր կի-

ներ, ինքրանքներու համեմատ,
աշխարհի շուրս բոլորը կուգար-
կուին. ասկէ դատ, այս անպատիւ
առուտուրով զբաղողներէ շատերը,
պատուաւոր զբաղում որոնելու հե-
տաժող տնհամար պարկեշտ աղ-
ջիկներ ճարպիկութեամբ իրենց
խաբէութեանց ցանցին մէջ կը
ձգեն, իւր թէ անոնց գործ հայ-
թայթելու պատրուակով զանոնք
հեռաւոր երկիրներ զրկելով—ուր
գործակատարներն ունին. այնպէս
որ, թշուառ աղջիկը կամ կինը,
յանկարծ իրեն անծանօթ օտար
հողի մը վրայ ինքզինքը կը գտնէ,
անպաշտպան, անպատուար, բնա-
կավայրը վերագաւառելու միջոցնե-
րէն զուրկ, և կը հարկադրուի,
յուսահատական առաջին վայր
կեանքներէ վերջ, հետզհետէ իր
նոր ճակատագրին ընտելանալով,
անձնատուր ըլլալ արհեստի մը,
ուր իր պատուոյն հետ յաճախ ա-
ղատութիւնն ալ կը մոռնայ :

Ահա զխաւորաբար կանանց վա-
ճառքի մասին միջազգային պաշ-
տօնական համաձայնութեան մը
յանգելով, վերոգրեալ անպատե-
հութեանց առաջը առնելու մի-
ջոցներուն վրայ՝ Բարիզի համաժո-
ղովը խորհրդակցութիւն կատարեց
ու քուէարկեց հետեւեալ որոշում-
ները :

Յողում Ա. Պիտի պատժուի այն
անձը որ ուրիշներու կրքերուն գո-
հացում տալու նպատակով անառա-
կութեան ենթարկելու համար հրա-
պուրած կամ խաբած է, նոյնիսկ աղ-
ջկան հաւանութեամբը, անչափաւաւ
կին մը կամ աղջիկ մը, եթէ յան-
ցանքը տարբեր երկիրներու մէջ ալ
գործուի :

Յողում Բ. Պիտի պատժուի այն
անձը որ ուրիշներու կրքերը գոհա-
ցնելու նպատակով խտրախտութեամբ,
սպառնալիքով, թուրքաւար կամ ուրիշ
միջոցով անառակութեան ենթարկե-

լու համար հրապուրած կամ խաբած է
չափահաս կին մը կամ աղջիկ մը,
նոյնիսկ եթէ յանցանքը տարբեր եր-
կիրներու մէջ ալ գործուի :

Ինչպէս կը տեսնուի, քուէար-
կելով այս երկու հիմնական որո-
շումները, համաժողովը կերպով
մը կը նուիրագործէ կանանց վա-
ճառքը, քանի որ միջազգային
պատիւ կը սահմանէ միայն այն
պարագաներուն ուր կին մը կ'ստ-
աղջիկ մը անչափաւաւ ըլլալով
կը հրապուրուի, կամ իր կամքիւ
հսկառակ, թուրքաւար կը հա-
փափուի. իսկ այս երկու պարա-
գաներէ դուրս, կանանց վաճառքը
կերպով մը պաշտօնապէս կ'արտօն-
ուի. այնպէս որ, խայտառակ
կաւատ մը որ չբաւորութեան մէջ
ծիւրող կնոջ մը կրակ. «կուզե՞ս»,
խնայելով տարիքիդ ու դէմքիդ,
նպատաւոր պայմաններով սա
հանրատունը մտնել, ոչ մէկ պաշ-
տօնական արգելքի հանդիմուելու եր-
կրող պիտի ունենայ, զուցէ իսկ
հետզհետէ պիտի կ'ընենայ պատ-
ուաւոր վաճառականներու կարգը
դասուիլ :

Իրաւ ալ, համաժողովոյն այս
որոշումները եւրոպական մամուլին
կողմէ ամենաբուռն քննադատու-
թեանց կենթարկուին, ու նշանա-
ւոր ընկերաբաններ ստիպողաբար
կը պահանջէին թէ, որպէս զի չա-
րիքը տրամադպէս դարձնելու կա-
րելի ըլլայ, գերադրապէս անհրա-
ժեշտ է հետապնդել ու պատժել,
ոչ թէ միայն անչափաւաւ աղ-
ջիկներ խաբող, այլ նոյնիսկ կա-
նանց առուտուրով զբաղողները, ինչ
ձեւի մէջ ալ ըլլայ, ինչպէս կ'ընեն
Գերմանիոյ և Նորվեգիոյ մէջ :

Մասնաւորապէս Բարիզի հա-
մաժողովոյն այս որոշումներուն
ոյժ տալու համար, տակաւին քանի

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

(28)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ

Քաղաքիտ երիտասարդները վրէժխնդրութեամբ
լեցուած՝ ապառաժներու մէջ մէյմէկ անառիկ դիր-
քեր բռնեցին ու տտակով ամբողջ կիրճին սիրտը
դրաւեցին ռազմագէտներու պէս :

Արեւը կամաց կամաց կը բարձրանար : Լեռնաձո-
րին ամբողջ երկայնքը անտառներով ծածկուած էր :
Հազիւ թէ ժամ մը անցած էր, անհ' ձայներու
վժլուոց մը լսուեցաւ հեռուէն, որուն արձագանքը
բոլոր կիրճին մէջ տարածուեցաւ :

— Լոռի թիւն... գոչեց Վանական : Կարծեմ թէ
ձայն մը կը լսուի : Պատրաստ կեցէ՛ք :

— Պատրաստ ենք... միայն թէ ձեր նշանը
տուէ՛ք, նկատել տուին բոլոր ընկերները :

Հեռուէն եկող ձայնին աւելի մօտեցան ու որո-
շապէս յայտնուեցաւ ձիաւորներու խումբ մը որ
երեսուն երեք հոգիէ կը բաղկանար :

Վանական զիտեց որ ութը ձիաւոր առջեւէն կու-

գար, իսկ մնացեալները թշուառ աղջիկը շրջապա-
տած կը բերէին :

Առանց ժամանակ կորսնցնելու, Վանական հրա-
մայեց որ նախադարձակ դիրքէն գնդակ մը նետ-
ուի :

Վանականին հրամանը կատարուեցաւ : Առաջին
գնդակը ձիէն վար գլորած էր քուրտ մը, որ մէկ
ձայնով կը ճզլը :

— Անձնատուր եղէ՛ք... պոռաց Վանական՝ որ
ապառաժի մը վրայ կեցած էր յաղթական դիրքով
մը :

Քուրդերը շուտաւ՝ փախչիլ կուգէին... :

— Մի՛ փախչի՛ք... կրկնեց Վանական. եթէ ոչ
ամէնքդ ալ այս կիրճին մէջ կ'իյնաք :

Ու հրամայեց ընկերներուն որ քանի մը գնդակ
արձակեն օդին մէջ :

Ան ատեն ձիաւորներէն մին շաշխանաւ քաշեց
մէջքէն ու սկսաւ պարպել :

Քուրտին համարձակութենէն սիրտ առած՝ միւս-
ներն ալ իրենց շաշխանները պարպելու սկսան :

Վանական մէկ ակնթարթի մէջ ժամանակ շահե-
ցաւ թէ՛ յառաջակողմէն եւ թէ՛ յետակողմէն քուր-
տներու խումբը պաշարելու :

Քուրտերը տեսնելով որ չորս կողմէն ճամբանին
կտրուած է, ակամայ վար առին իրենց զէնքերն
ու կեցան :

— Տղայք, սուրբերնիդ պատեանը դրէ՛ք ու միայն
վեցնալուածը բռնած քուրտներուն մօտեցէ՛ք, հրա-
մայեց Վանական. եթէ չարժուած մը ընելու ըլլան,
անմիջապէս կրակեցէ՛ք :

Ու ինքը յառաջ անցնելով մօտեցաւ քուրտներուն

ու հարցուց թէ՛ ո՞վ էր իրենց գլխաւորը :

— Մեր Շէյխն է, պատասխանեցին քուրտերը՝
մատնանիչ ընելով ճիւղակ փաթթոցով մարդ մը,
որ ձիուն վրայ կը դողար :

Վանական արհամարհանքով մը Շէյխին մօտեցաւ
ու հրամայեց որ վար իջնէ ձիէն :

Շէյխը դողալով վար իջաւ ձիէն :

— Ո՞վ է այս աղջիկը... ի՞նչ աղդ է... հարցուց
Վանական բարձր ու հրամայական ձայնով մը :

— Չեմ գիտեր... կ'մկմաց չար ոգի Շէյխը :

— Կապեցէ՛ք սա վատին թեւերը, հրամայեց Վա-
նական՝ իր ընկերներուն գառնալով :

Շէյխին թեւերը չուանով մը կապուեցան :

— Ըսէ՛, չուտ րէ՛, եթէ ոչ գլուխդ կ'իյնայ կե-
ցած տեղդ, գոչեց Վանական :

Շէյխը վախէն կէս մարդ կտրեցաւ ու երեսին
գոյնը մոռնի գոյն մը դարձաւ :

— Ըսէ՛, ի՞նչ աղդ է այդ աղջիկը, կրկնեց Վա-
նական :

— Յլայ է, միմիջեց Շէյխը :

— Յլա՞յ... :

— Այո՞ :

— Ո՞ւր կը տանէիր զինքը :

— Մեր պէկին :

— Որո՞ւ կամբով :

— Ո՞չ մէկուն :

(Շարունակելի)

մը շարժած ուսման ֆորմալիզմը (Գերմանիա) մէջ կը գումարուէր միջնակարգ ուսման համակարգով մ'աւելորդուին մասնակցեցաւ նաեւ Քարիզի ուստիականագետ Մ. Լէրին: Կառնանց վաճառքով զբաղողները միայն պատիժի ենթարկելու անհաւանական է, քանի որ հազարաւոր գուհերու թշուառ վիճակը այդպէսով ոչ մէկ դարձան, ոչ մէկ թեթեւացում պիտի կրէր. հարկաւոր է հոգ տանիլ մէկ կողմէ ասոնց թշուառութիւնը ամօքելու, և միւս կողմէ ալ, մասնաւոր գործակալութեանց միջնորդութեամբ, ամէն վայր աշխույժ հսկողութիւն մը կատարել, որպէս զի գրադուծի խնդիր անժանօթ քաղաքներու մէջ դեղերով անպաշտպան կիները կարելի ըլլայ առժամապէս պատուարել ու զտնոյթ իրենց երկիրը վերադարձնել: Գերմանիոյ մէջ արդէն կանանց վրէժքն զէմ յաջողապէս կառուցու համար, 1895էն ի վեր երկաթուղային բազմաթիւ ընկերութիւններ գոյութիւն ունին. ու ճշդիւ, Ֆրանսֆօնդի համաժողովը որոշեց անգրադ սպասարուհիներու և ուսուցչուհիներու պաշտօն հայթայթելու համար՝ ձրի գործակալութիւններ հաստատել գանազան վայրերու մէջ, և հիմնել նաւահանգիստներու մէջ ալ նմանապէս ուղեւորական ձրի գրասենեակներ, որոնց շնորհիւ գուցէ կարելի պիտի ըլլայ հազարաւոր անմեղներու գէթ մէկ մասին անմիջական օգնութեանը փութալ:

Տ. Է.

ՊԱՐՍԱԿԱՆԱՅԵՐԸ

Պարսկահայերու արդի Առաջնորդը, Տ. Եղիշէ վարդապետ Մուրաթեան, որ Ռուսահայ գաղթականներու փակուելուն միջոցին, երբ էջմիածինն իսկ ընելիքին վրայ չուարի մնացեր էր, քաջութիւնը ունեցաւ միւս միջակը Բեքրապուրի բողոքելու, այժմ ալ, իր նոր պաշտօնին գլուխը անցած, գերմարդկային ջանքեր կրնէ մէկ կողմէ Պարսկահայերու կրթական կազմակերպութիւնը կանոնաւոր ու տեւական հիմնուր վրայ գետնդնելու համար, և միւս կողմէ ալ անդուռ անդադար կը մաքաթի Սալմաստի հայ գիւղացիները թալլող ու բռնաբարող այն կարգ մը արխանդակ հայ յեղափոխականներու դէմ, որոնց վերջին շահատակութիւնները տակաւին այս օրեր Խրաշմի, Նոր-Խաւս արտապելով ներկայացուց, ինչպէս որ արտասահմանի բուր թերթերէն աւելի հանրութեան ուշադրութիւնն իր հրատարակութիւններովն այս խնդրոյն վրայ հրաւիրած էր:

Տ. Եղիշէ վարդապետ անձամբ Սալմաստ երթալով, Հաֆթվան գիւղին մէջ գիւղացիները Ընդհանուր Ժողովոյ մը հրաւիրած է. ըսենք թէ այժմ Սալմաստի մէջ կան 20է աւելի զբոսայտայէ բողոքողներ հայրենի հայաբնակ գիւղեր, այնպէս որ 1000-1200է աւելի զգործական երախաներ փողոցներու մէջ թափառալած կը փճանան:

Հաֆթվան գիւղի գումարուին մէջ, որուն Սալմաստի բողոք գիւղերն ալ

կը մասնակցէին, Տ. Եղիշէ վարդապետ հրաւիրած է գիւղացիներն որ ձեռնարկեն կեդրոնական-երկրագործական գաղթի մը հիմնարկութեանը գիւղացիները Մուրաթեան վարդապետի այս առաջարկը ընդունելով, որոշում տուեր են զպրոցը հիմնել Հաֆթվան գիւղին մէջ, ուրտեղի գիւղացիները ինքնաբերաբար յանձն առած են զպրոցական շէնքը կառուցանելու հարկաւոր հողը նուիրել:

Տարակոյս չկայ, Սալմաստի մէջ այսքան բարձր ծրագրով զպրոցի մը հիմնարկութիւնը այնտեղի հայ բնակչութեան համար կատարեալ յեղաշրջում մը պիտի առթէ. վասն զի թէեւ Պարսկահայ քաղաքներու մէջէն Թէհրանը ու Նոր-Ջուհան ունին մէյմէկ և թաւրիզը երկու գաղթող ուր կը յաճախեն երկու սեռէ աշակերտներ, — առանց հաշուելու բարեգործական ընկերութեան նպատակը գոյութիւն ունեցող մանկապարտէզը, — բայց Սալմաստի վիճակը զպրոցական տեսակէտով հիմնովին կը տարբերի այնպէս որ, այդ կողմերու հայութիւնը, ինչպէս Սալմաստի, Բարանդուզի և Խոյի մէջ, զպրոցներ չըլլալուն համար իր մայրենի տոհմային բարբառը գրեթէ կորուսած է. նոյնպէս առեւտրական տեսակէտով Արագածականի նահանգին ամենէն վաճառաշահ, ամենէն բարգաւաճ քաղաքին՝ Մարաղայի հայ ժողովուրդը ամենախտին, ամենաթանձր ագիտութեան մէջ կը խախտուի, ու հարկադրուած է պարսկերէն լեզուն գործածելու: Իսկ Լաւրատայի մէջ Փայտակարանը զպրոցական տեսակէտով ալ աւելի յետամնաց է, այն աստիճան որ, բովանդակ դաւառին տարածութեան վրայ դժուար է գտնել քահանայ մը, որ գէթ ծանօթ լինէր եկեղեցական արարողութեանց ու կարենար Աւետարանը անսխալ կարդալ:

Հետեւապէս, Պարսկահայերու ներկայ Առաջնորդը, Տ. Եղիշէ վարդապետ Մուրաթեան, օգտուելով Մուրաթեանի Շահին Հայերու վերաբերութեամբ բարձրօրէն բարեացակամ տրամադրութենէն, — որը տակաւին ներկայ տարիի Փետրուար ամսուն մէջ մասնաւոր Ֆեյրաւանով մը Պարսկաստանի վարչական իշխանութիւնները կը հրաւիրէր՝ որ Հայերու բացառիկ գիւրութիւնները տան ուղած աստիճանին, ուղած կերպովին զպրոցներ հիմնելու համար — ու հետամտեալով ագիտութեան և ամենաթանձր խաւարի մէջ տապալկող Պարսկահայ գիւղերը կրթական հաստատութիւններով օժտելու, Տ. Եղիշէ վարդապետ այդ կողմերու մէջ հայ ցեղին պահպանումին, զարգացումին, յառաջացումին տեսակէտով ամենադանաւատելի գործն է որ պիտի յաջողցնէ:

Ոչ ոք կրնայ գուշակել թէ Պարսկահայերու մասին ապագան իր թագուն ծալքերուն մէջ միզի ինչ կը վերապահէ. բայց քանի որ այժմ Պարսկահայերը բողոքողութիւնը ունին վայելելու վեհապետի մը տիրապետութիւնն, որ երբեք պատեհութիւնը չը կորսնցնէր Հայերու բարեգործական թէ կրթական ձեռնարկներն հովանաւորելու և նպատաւորելու, ու միակ վեհապետն է որ երկրին վարչական բարձր ասպարէզը ունի մէջ Հայերը կը հիւրընկալէ. քանի որ Պարսկահայերը բողոքողութիւնն ունին այժմ վայելելու առաջնորդութիւնն այնպիսի եկեղեցականի մը որ, կարելի է առանց չտիպաւանցութեան ըսել, Ռուսահայ եկեղեցականներու ամենէն գործունեայ, ամենէն նորատի ուժերէն մէկն է, ու իր ձեռներէ-

ցութեան ապացոյցն ալ տուած է. վերջապէս, քանի որ այժմ Պարսկահայ բարձր դասու պատկանող տիկիներ և անհասներ՝ տոհմային յառաջգիւղական, որքան որբախնամ բարեգործական ձեռնարկութեանց մէջ գործունէութեան նախաձեռնութիւնը կը ստանձնեն, կարելի է ենթադրել թէ հայ ազգին Պարսկահայ հատուածը, զերծ խափանաբար ունէ արգելքէ (ինչպէս իր Ռուսիոյ ու Թուրքիոյ կրօնակիցները), ազատ համարձակ պիտի կարողանայ ածիլ, զարգանալ, ու գոցէ համօրէն հայութեան համար յուսաւորութեան ու հայրենասիրութեան վառարան մը ըլլալ:

Տ.

ՅԱՆՅԱՆՔԸ ՈՐՈՒՆ Է

Չ.

Զօրեան (Ռոստոմ) քննիչ

(Շար. նախորդ քիւնի)

Ռոստոմի այդ ժողովին բուն նպատակը վարդօն արդարացի էր. տեսնելով հանդերձ որ 1,800 Ֆրանքի չափ զեղծումն մէջտեղ կը մնայ, ինչպէս իր բացակայութեան նմանապէս ալ այդ ժողովէն վերջը այլեւս հաւատք չունեցանք Ռոստոմի վրայ. ի հարկէ մեզ աւանուս համար աւելի ցաւալին այն էր որ պիտի դադրէինք Դաշնակցութեան համակիր ու բարեկամ ըլլալէն, ինկատի ունենալով Ռոստոմներու ընթացքը որ լոկ զեղծմանարարներ և խաչագողներ պաշտպանելու և արդարացիելու ու ժողովուրդին աչքին փռչի փչելու կը ծառայէր...

Երկրորդ ժողովին Ռոստոմ իր հետ ոչ Օ. Գ. ունէր և ոչ ալ գոմիթէի շինուռ տրամարը. Ռոստոմ և Վ. Մ. ջանացին համոզել Տիկիները և Օրիորդները թէ ստակները Պիւսոն գացած է և քիչ ատենէն պիտի հրատարակուի: Մեր հետեւեալ կտրուկ պատասխանը վերջ տուաւ իրենց այս փաստարանական ճիգին:

Պատճառն ինչ է որ Պիւսոն գացած գումարները գրեթէ չորս տարի վերջ կը հրատարակուին և թէ կրնաք այդ տեսակ օրինակ մը ցոյց տալ մեզ:

Ռոստոմ և Վ. Մ. սկսեցին Մասնախումբը սիրաշահելու միջոցներ ձեռք առնել, երբ տեսան թէ այդ միջոցներն ալ արդիւնք մը յառաջ չը բերէր. Մասնախումբէն խնդրեցին որ սօքիւմանները իրենց յանձնեն, իրկու օրէն վերջը դարձեալ վերադարձնելու պայմանաւ. մերժուեցան: Երբ տեսան որ Մասնախումբը այդ սօքիւմանները իր ձեռքէն հանելու բնաւ նպատակ չունի և չը համոզուիր, խորիւնալ վերջ տուին ժողովին տրտում և տխուր ու գլխիկոր հեռացան մեր տունէն:

Այդ վերջի ժողովին մէջ Մաս.

նախումբը առանց իրենց ձեռք առած միջոցներուն կարեւորութիւն տալու և համոզուելու, պահանջեց որ Դաշնակցութիւնն իւր արդար պատիժ մը Դրոշակի մէջ հրատարակէ վարդոյի կուսակցութենէն տրտաքուելը:

Ռոստոմ առարկից թէ Դաշնակցութիւնն այդպիսի հրատարակութիւն մը չը կրնար ընել, քանի որ մինչեւ հիմայ այդ տեսակ օրէնք մը եղած չէ Դաշնակցութեան մէջ:

Ռոստոմի այս խօսքերու իմաստը մենք լաւ հասկցանք և կարծենք թէ ազնիւ ընթերցողն ալ կը հասկընայ. ուստի Ռոստոմի այս պատասխանն ամենուս գալչանք և զգուանք պատճառեց դէպի...:

Յանցանքը արժէն է:

Յ. Կ. ՅԱՆԿԻՆԼԵԱՆ

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեր նախորդ թիւերուն մէջ մանրամասնաբար ծանօթացուցած էինք կեսարացի վաճառական հանգուցեալ Յովհանէ, կիւմիւշեանի ազգային զանազան հիմնարկութեանց կտակած գումարներուն տրամադրութիւնները. հոկտ. 27ին Պօլիս Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցիին մէջ Պատրիարքին ներկայութեանը, այս բարերարին մահուան առթիւ, հանգիստաւոր պատարագ մատուցուած է. Տէր Մաղաքիա Պատրիարք գամբանական մը խօսելով, դուռաւորած է հանգուցեալին բարերարական ոգին:

— Պօլսոյ ուսումնական խորհուրդը, անհրաժեշտ նկատելով Պօլսոյ ազգային վարժարաններուն ներքին ուղղութեանը համար միտքինակ կանոնադրի մը պէտքը, մասնախումբ մը կազմած է այդ մասին ծրագիր մը պատրաստելու համար:

— Ս. Էջմիածնի մէջ արդի պահանջները լիովին գոհացնող հոյակապ վեհարան մը կառուցանելու համար արդէն մտադրութիւն կար. Պաքուցիները յանձն առնել իրենք չէնք ինք բոլոր ծախքերը հատուցանել: Այս առթիւ Պաքուէն ճարտարապետ մը ուղարկուել է, շինութեան վերաբերեալ տեղական պայմաններն ուսումնասիրելու համար:

— Լոնտոնէն Պ. Կ. Թումանյան խմբագրութեանն ուղղած է երկարապատում գրութիւն մը, որուն միջոցաւ կը բողոքէ ժամանակէ մը ի վեր իր անձին ու որբախնամ հաստատութեանը մասին Արտասահմանի մամուլին մէջ տարածուող կարգ մը աննպատակ զրոյցներու դէմ. պ. Թումանյան մատնանիջ կրնէ տարիններու ընթացքին մէջ իր հայրաբար ու անձնուիրաբար հայ որբեր պատուաբանին ու դաստիարակելը, ու ցաւ կը յայտնէ

